

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյալիս խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ

„ՄՇԱԿ“

ԱՄԵՆՈՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻՆԿԱՑ 1884 ԹԻՒՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ԴԻՐԲՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՑՈՎ

ՊՐՕԳՐԱՄԱ

I. ՏԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ: II. ԱՌԱՋՆՈՐԴՈՎ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ: III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ: VI. ՀՆՌԱԳԻՐՆԵՐ: VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Ֆելիետոն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ գիտութեան ամեն ճիւղերից, թղթակցութիւններ: VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԲԱՅԱՆՈՐԴԱԳԻՐ: Տարեկան 10 ռուբլ, վեց ամսվայ 6 ռուբլ, իւրաքանչիւր ամսվայ 1 ռուբլ:
ՀԱՏՈՎ համարները 5 կոպեկ:
ՀԱՏԵՆ. Тифлис, редакция «Мшак».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

МАГАЗИНЪ офицерскихъ вещей
САЛАМБЕНОВА, на Дворцовой улицѣ,
въ домѣ Сараджева, будетъ открытъ
въ четвергѣ, сего 15-го декабря.

2—3

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Կաթողիկոսական հարցի առիթով:—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Արտաքին լուրեր:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀՆՌԱԳԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Մեր առաջնորդի գործունէութիւնը:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ

III.

Նախընթաց յօդուածում մենք խոստացանք խօսել արդէն յայտնի ընտրելիների մասին, թէ նրանցից ո՞րը իր արժանաւորութիւններով աւելի գերազանցութիւն ունի ընդհանուր հայոց հայրապետական աթոռի ժառանգորդ լինելու: Նախ քան ուղղակի գի-

մելը այս կամ այն անձնաւորութեան անուններին, աւելորդ չենք համարում մի քանի խօսքով յիշել, թէ որպէս են ուրիշները բացատրում կաթողիկոսի իսկական նշանակութիւնը:

Ոմանք, մինչև անգամ հրապարակաօսներ, այնքան համեստ են, որ կաթողիկոսից շատ փոքր բան են պահանջում. բաւական է, ասում են, որ նա հայոց եկեղեցուն հաւատարիմ լինի (կարծես, մի հասարակ գիւղական քահանայ պէտք է հայոց եկեղեցուն հաւատարիմ չը լինի), բաւական է, որ նա պահպանէ արդէն եղածը (այսինքն՝ ինչ որ կայ և ինչ գրութեան մէջ որ կայ) անփոփոխ պահէ. պէտք է նա քաղաքականութեամբ չը հետաքրքրվի, և իր հոգեւոր պարտաւորութիւններից դուրս այլ ձգտումներ չունենայ, պէտք է ժամ գնայ և հայոց ազգի համար աղօթէ և այլն:

Համեստութիւնը պատրասկելի բան չէ, եթէ համեստութեան տակ թաքնված չը

լինէին խորամանկ նպատակներ: Այսպիսի ճշմարտական քարոզներ կարգացողները զլիսաւորապէս նրանք են, որ աշխատում են մի աննշան եպիսկոպոսին (որի անունը ամառում են տալ) առաջ մղել, հաւատացնելով հայ հասարակութեանը, թէ այդ մարդին էլ բաւական է, ասար հայոց կաթողիկոսութիւնը ի՞նչ բան է, որ տաղանդաւոր մարդիկ էք որոնում:

Հետաքրքիր կողմը այն է, որ այդ հրապարակախօսները հարկաւորած ժամանակ էջմիածնի կաթողիկոսի նշանակութիւնը այն աստիճան մեծացնում են, որ հռոմէական պէտք է նրա փառքին երանութիւն տայ,—բայց երբ պէտք է խիկարին կամ Ղազարին պաշտպանել, այդ ժամանակ կաթողիկոսի նշանակութիւնը այնքան փոքրացնում են, որ նա դառնում է էջմիածնի վանքի ժամ օրհնող:

Ընդհանուր հայոց հայրապետը էջմիածնի վանքի ժամ օրհնող չէ, նա գործ ունի ամբողջ ազգի հետ և ամբողջ ազգի հոգեւոր գլուխն է: Եւ որպէս էջմիածինը է սրբաւայր և միջնակէտ ընդհանուր հայոց եկեղեցու, այնպէս էլ էջմիածնի հովուական պէտք է պահպանէ բարոյական և հոգեւոր կապ ամեն տեղ յղած հայերի մէջ: Նա այդ մեծ պաշտօնը կատարել չէ կարող, եթէ բոլոր ազգին ծանօթ և բոլոր ազգից սիրված մարդ չէ: Ուրեմն, այստեղ նշանակութիւն ունի կաթողիկոսի ընդարձակ ժողովրդականութիւնը, որպէս զի ազգը նրան յարգէ, նրան սիրէ և նրա վրա հաւատ ու վստահութիւն ունենայ:

Մենք բոլորովին աւելորդ ենք համարում ընթերցան տակ ձգել այն արժանաւորութիւնները և այն համոզութիւնները, որ պահանջվում են մի անձից, երբ կամենում են նրան կաթողիկոսական աթոռին արժան համարել, ասելով, թէ նա պէտք է ժողովուրդը ճանաչէ, թէ նա պէտք է վարչական ընդունակութիւն ունենայ, թէ նա

պէտք է անտեսազէտ լինի, քաղաքագէտ լինի, կրօնագէտ լինի և այլն: Այդ բոլորը այնպիսի ճշմարտութիւններ են, որ դրանց դէմ վիճելն անգամ երկաւորութիւն կը լինէր, որովհետեւ, շատ պարզ է, որ բարձր պաշտօններ վարողները պէտք է բարձր և բազմակողմանի ընդունակութիւններ ունենան: Բայց հարցը նրանումն է, որ այդ ընդունակութիւնները մարդկանց ճակատին չեն գրված, որ կարգաւոր իմացվի, թէ ով ունի կամ ով չունի: Մարդիկ իրենք ի գործունէութեան մէջ ցոյց են տալիս իրանց ընդունակութիւնները: Եթէ մի եկեղեցական ընդհանուր յարգանք և սէր է վայելում ժողովրդից, եթէ նա դուրսէլ է ժողովրդի վստահութիւնը,—դա ամենապարզ ապացոյցն է, որ նա մեծ արժանաւորութիւնների և ընդունակութիւնների տէր է, որովհետեւ առանց դրանց անկարելի է գահացնել ժողովրդին: Ժողովուրդը միշտ զբոս է, նա երկրպագում է միայն ամենազօրաւոր հեղինակութիւններին:

Այսպիսի անձնաւորութիւններ ամբողջ ազգի մէջ մենք մի դոյզ միայն ունենք, արդարեւ, երկու հսկայ կոթողներ, որոնց գերազանցութեան չափը մինը միւսին հաւասար է, և որոնք հաւասար կերպով պաշտելի են ազգին: Ընթերցողը կը հասկանայ, որ մեր խօսքը Ներսէս պատրիարքին և Խրիմեան հայրիկի մասին է:

Դրանցից առաջինը, Ներսէսը, ճաճկաստանի հայոց պատմութեան մէջ ստղծեց մի նոր դարաշրջան, որից սկիզբ դրվեցաւ առ երկրի հայերի հանգստութեանը և ապագայ բախտաւորութեանը: Իրաւ է, քաղաքական հանգամանքները նպաստեցին նրան,—բայց մեծ տաղանդները միայն կարողանում են օգուտ քաղել հանգամանքներից, իսկ փոքրիկ մարդիկ ձեռքից փակցնում են ամենայնպէս հանգամանքներն անգամ:

Չը կայ մի հայ, որ Ներսէսի անունը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ԱՌԱՋՆՈՐԴՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՒԹԻՒՆԸ

Մեր պարբերական թերթերը պահանջում են, որ կաթողիկոսի ընտրութեան համար հարկաւոր է ի նկատի ունենալ յառաջադէմ և նշանաւոր եպիսկոպոսների ցուցակը և նրանց կենսագրութիւնն ու գործունէութեան պատմութիւնը: Իսկապէս ասած սա մի շատ իրաւացի պահանջ է, բայց մի և նոյն ժամանակ շատ դժուար:

Ասում եմ դժուար է, որովհետեւ մենք սովորութիւն ունենք մարդու գործունէութեան մասին գրել և խօսել նրա մահից յետոյ, իսկ մեռած մարդու մասին ընդհանրապէս կամ լաւ են ասում և կամ բոլորովին ոչինչ: Բայց եթէ մեր իւրաքանչիւր առաջնորդի, յաջորդի և այլ պաշտօնակալ անձանց գործունէութիւնը իր լաւ և վատ կողմերով նկարագրելու սովորութիւն ունենայինք, այսօր մենք կունենայինք շատ եպիսկոպոսների կենսագրութիւններ որոնց վրա հիմնված ընտրութիւն կանէինք: Մի կողմից ապալի համար գործը մասամբ նշտադրելու և միւս կողմից մեր առաջնորդի գործունէութեան մասին ու մեր ներքին գործերի վերաբերութեամբ մեր հե-

ռաւոր ազգայնոցը տեղեկութիւն տալու մտքով ամենիս պարտքն է գրել և քննել այն, ինչ որ կատարված է, ինչ որ կարգադրած է:

Ով մի անգամ մտել է Վանաց մայր եկեղեցու դահլիճ և մի հայացք ձգել առաջնորդարանի անշուք շինութեան վրա, անշուշտ նրա մտքով անց կը կենար հետեւեալ մտածմունքը. արդե՞ք միթէ կոնստանդուպոլիսի միակ հոգեւոր ատեանի համար ունենալ մի վայելուչ բնակարան: Ով պատահմամբ մտել է նոյն իսկ առաջնորդարանի ներքւային անձրանային օր, անկասկած ակնառատես եղած կը լինի այն տեսարանին, թէ ինչպէս անձրանի ջուրը թափվելով կտորտած ու հնացած պատուհանների փեղկերից՝ լճակներ էր գոյացնում, իսկ քամին չորս կողմից փչելով մարդ մտում էր չըւարած և ինքն իրան ասում. «ամօթ չէ Թիֆլիսի նման մի հայաբնակ քաղաքի համար ունենալ այսպիսի աւերակ շինութիւն, որպէս առաջնորդարան է»: Իսկ նրանք, որոնք օտար երկրից իւր են եկած մեր առաջնորդի մօտ, անպատճառ մի արհամարհանք դրաւով դէպի մեզ, դէպի Թիֆլիսեցիներս, իրանց հայրենակիցներին պատմած կը լինեն թէ՛ ինչպէս առաջնորդը կարմրելով ու քրքրանալով ներողութիւն է խնդրել յարմարաւոր սենեակում չը հիւրասիրելու համար: Այսպէս էր մեր առաջնորդարանը մինչև այսօր ոչ թէ կոն-

ստանդարտի դրամական սուղ միջոցների պատճառով, ոչ թէ անտեսութիւն պահպանելու նպատակով, այլ այն պատճառով, որ չը կար մէկը, որը մտածէր կոնստանդուպոլիս և առաջնորդարանը իր վայելի դիրքի մէջ պահպանելու համար: Եւ ում դարձնէր կարգվել դրա մասին մտածելու: Սակայն մեր նորընտրի առաջնորդը մօտ երկու ամիս է սկսել է առաջնորդարանի վերանորոգութիւնը թէ ներսից և թէ դրսից և մէկ ամսից յետոյ Ար. սրբազանը ցոյց կը տայ մի շինութիւն, որը յիշակալ պատու կը բերի մեր Թիֆլիսեցոյ:

Բոլոր Թիֆլիսեցոյ յայտնի է, որ ջրօրհնաց հանդէսը կատարելու համար քաղաքիս բոլոր եկեղեցիները պարտաւորված էին տարեկան մի յայտնի գումար վճարելու կոնստանդուպոլիս Վանաց մայր եկեղեցու մօտից մինչև նրա մօտի կըդդին փայտեայ ժամանակաւոր կամուրջ շինելու համար: Այդ նպատակով հաւաքած փողերից, եթէ սկզբնաւորութեան օրից հաշուելու լինենք, այնքան գումար կը գոյանայ, որ այդ գումարով կարելի էր երեք մշտական կամուրջ ունենալ:

Նորին սրբապետութեան խելացի կարգադրութեամբ հրաւիրվեցան բոլոր եկեղեցիների երէցփոխանները և սրբապետը առաջարկեց նրանց մի յայտնի գումար կազմել Թիֆլիսի եկեղեցիներից մի երկաթեայ մշտական կամուրջի սիւներ շինելու որոշեալ տարածութեամբ (կամուրջի վերին շարժա-

կան մասը՝ տախտակներ հանդիսից յետոյ կը պահվեն միւս տարիների համար) Արտաւկէս սրբապետն այս մտադրութիւնը անտեսական կողմից մեծ նշանակութիւն ստանալով եկեղեցիների համար՝ երէցփոխանները սիրով ընդունեցին:

Առաջնորդը ի նկատի ունենալով Թիֆլիսի Հաւաքար կոչված քաղաքամասի բազմաթիւ հայ երեխաների կրթութեան խնդիրը՝ մտադրեց մի միջնակարգ շինութիւն գտնել բերել: Այս մտադրութիւնը մենք այսօր կատարված ենք տեսնում: Այս բոպէիս Շամբուռեցոյ եկեղեցու դահլիճում կառուցված է մի փառաւոր երկու յարկան շինութիւն 5—6 սենեակներով, ուր շուտով դաստաւարութիւնը կը սկսվի: Թէ ինչ մեծ նշանակութիւն ունի սրբապետն այս գեղեցիկ ձեռնարկութիւնը ինքն ըստ ինքեան հասկանալի պէտք է լինի մեզ բոլորիս և մանաւանդ հաւաքարեցիներին, այն հաւաքարեցիներին, որոնց սրբաբնիկ Ներսիսեան զպրոցում տեղ չը գտնելու համար ստիպված էին բաւականաչափ ծիսական դպրոցի կրթութեամբ:

Եթէ նրանց վրա աւելացնելու լինենք այն 3—4 մանկական պարտէզները, որոնք բացվել են Թիֆլիսում առաջնորդի թղթաւորութեամբ զանազան եկեղեցիների անուամբ, ընթերցողը պարզ կը համոզվի, որ մեր առաջնորդը հոգւով չափ սիրում է և համակրում լուսաւորութեան գործին:

լսած չը լինի, որ նրան չը սիրէ ու նրան չը յարգէ: Նրա թշնամիներն անգամ չեն յանդգնել նրա վրա մի փոքրիկ բիծ դնել: Երբ հարցը նրա ընտրութեանն է վերաբեր- վել: Նրանք միայն կողմնակի, մի և նոյն ժամանակ քաղաքավարի, պատճառաբանու- թիւններով աշխատել են յետ կասեցնել սրբազանին կաթողիկոսական աթոռից, յայ- տնելով միշտ այն կարծիքը, թէ նա Կ. Պոլ- սի և առհասարակ ճաշկաստանի հայերի համար հարկաւոր է, լաւ չէ նրան իր բռնած դիրքից շարժել, թէ իբրեւ Կ. Պոլսի պատրիարք նա աւելի մեծ գործ կը կատա- րէ, քան իբրեւ Էջմիածնի կաթողիկոս և այլն: Այժմ սկսել են սրբազանի անձնա- կան հիւանդութիւնը առաջ բերել, թէ նա հանգստութեան կարօտ է, քան թէ մի այնպիսի բազմազգայ պաշտօնավարութեան, որպէս է ընդհանուր հայոց կաթողիկոսու- թիւնը:

Վերջին միտքը աւարկողները մէջ իր վրա ուշադրութիւն դարձրեց թէ մեր Կ. թէ Կ. Պոլսի մամուլի մէջ պ. Խիւքճեանի յո- ղուածքը, որը նոյնպէս հիւանդութեան մահճի մէջ էր գրված: Մի հիւան- դի միւս հիւանդին կարեկցելը մենք շատ բնական ենք համարում: Բայց եթէ պ. Խիւքճեանի կարեկցութիւնը անկեղծ էր, եթէ նա իրաւ հանգստութիւն և առող- ջութիւն էր ցանկանում սրբազանին, թող խորհուրդ տար ուղարկել նրան դէպի մեր կողմերը, որովհետեւ Կ. Պոլսի ինտրի- զաների մէջ, ուր մի խումբ դաւա- ծաններ ստիպում են նրան ամեն տա- րի մի քանի անգամ հրաժարական տալ, —այդ գրութեան մէջ մարդիկ ու- նեցած առողջութիւնն էլ կը կորցնեն: Ռուսաստանից, բայց Ռուսաստանին բոլորո- վին անձանօթ պ. Խիւքճեանը, պէտք է հասկանայ, որ այժմեան Էջմիածինը Ներ- սէս Վրդի անտառի և լճի շուրջիւ այն- պէս վատասող չէ, որպէս նա՝ նկարա- գրում է, բացի դրանից, նա ունի իր կող- քին Բիւրականի հիւանդի ամբարանը իր կաթողիկոսարանով: Մենք հանգուցեալ Գե- որդ կաթողիկոսին տարեկան երեսուն և վեց հազար ռուբլի (թողեալ իր մասնաւոր եկամուտները) վեհարանի ծախք էինք տալիս, բայց դուք Ներսէս սրբազանի հի- ւանդութիւնը ամբողջ համար օժիւրն էք տալիս պատրիարքարանի դատարի սնու- կից...

Ներսէս սրբազանի հիւանդութիւնը, որ-

պէս շատ ճիշտ նկատել էր «Արձագանք» շաբաթաթերթը, պէտք է աւելի քաղաքա- կան համարել, այսինքն՝ որպէս պատրուակ զանազան տեսուր հանգամանքների առաջը առնելու, քան թէ ֆիլիքսական: Մեզ բա- ւական է միայն, որ նա առողջ և կենդա- նի մարդ է իր խելքով և իր գործունէու- թեան անխնայ ու անվատակելի եռան- դով: Կ. Պոլսի մալլոտ միջնորդը միայն վատ է ազդում նրա առողջութեան վրա, պէտք է նրան դուրս հանել այդ ապա- կանիւմի միջնորդից:

Կառնանք իրիմեանին:

Կեռ 1873 թւին այդ տղերի գրողը «Մշակի» մէջ հրատարակեց մի ընդարձակ յօդուած «Մի քանի զ ծ եր ի ր ի մե ան ի կ ե ան ք ի յ» վերնագրով: Այն ժամանակից անցել է ուղիղ տասն տարի: Եթէ մենք կամենայինք նրա կենսագրութեան վրա ա- ւելացնել մի քանի պայծառ գծեր ևս, որ արտայայտվել են այդ տասն տարեայ ըն- թացքում,—ուղիղ կը ստանայինք մեր Վրդ դուրս Սահակ պարթևի կամ Ներսէս մե- ծի ճիշտ պատկերը, որոնք հայոց պատմու- թեան մէջ ամուս հանուն են թողել:

Իրիմեանին հայոց ամբողջ ազգը «հայ- րիկ» է կոչում: Աշխարհի բոլոր փայլուն տիտղոսների մէջ չը կայ մէկը, որ այդ հո- մեստ կոչման նման բովանդակէր իր մէջ այնքան ընդարձակ զգացմունք, սէր և յար- դանք: Կա փառքի և աստիճանի տիտղոս չէ, որ պաշտօնական անշունչ թղթերով են տալիս, դա այն որդիական կոչումն է, որ բղնում է կենդանի սրտից,—մի կոչում, որ ընտանիքի անդամները տալիս են գեր- դաստանի զթառատ հօրը: Իրիմեանը հայ- կական մեծ գերդաստանի հայրն է:

Նրա ամբողջ կեանքը ներկայացնում է արկածների մի նշանաւոր շարք, մի երկայն շղթայ, որի իւրաքանչիւր օղակը արտայայ- տում է նրա բարձր առաքելութիւնը և նրա օգտաւէտ գործերը: Այդ շղթան կռիւ և կռիւն է նա իր դառն աշխատանքով և անվատակելի եռանդով: «Նրա իրակ Արա- րատեանը» նրա խորին ժողովրդասիրական ոգու հայելին է. նրա երկար տարիներով հրատարակած «Արձիւ» վասպուրականի, ամսագիրը, նրա մտքի բարձր թռիչքն է, վարպետ վանքի ժառանգաւորաց դպրոցը, իր տպարանով և կրկնագործական ուսում- նարանով, նրա գործերից ամենափոքրիկն է:

Ուրեմն ի՞նչով կարող է հայոց ազգը ցոյց տալ իր երախտագիտութեան զգաց-

մունքը դէպի այդ երկու պաշտելի եկեղե- ցականները, Ներսէսը և իրիմեանը, եթէ ոչ նրանով, որ հրաւիրէ այդ արթուն և քաջ հովիւներից մէկին մեր Լուսաւորիչ հօր սուրբ աթոռը, որը ժառանգելու համար նրանք արժանի են կացուցել իրանց անձը միմիայն գործով և որոնց պայծառ անցեալը մեծ երաշխաւորութիւն է խոս- տանում նրանց ապագայ գործունէութեան համար:

Հետեւեալ յօդուածում կը խօսենք, թէ մենք, ռուսաստանցիներս, ինչ եպիսկոպոս- ներ ունենք, որոնց վրա կարելի լինէր մատ- նացոյց անել:

Մէկըզարէ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ ամսիս 5-ին երկու մարդիկ բերում են մի սնուկ և պահ են տալիս այնտեղ վաճառականներից մէկին, որ պա- ճի խանութում մինչև հետեւալ օրը: Վաճառա- կանը կասկածելով, թէ չը լինի սնուկում մի վատագուր բան կայ, ուզում է բանալ սնուկը, բայց չէ կարողանում: Վերջապէս վաճառականին յաջողում է կոտրել սնուկը, և ինչ է տեսնում. սնուկում պառկած մի կենդանի մարդ և զանա- զան գործիքներ: Իսկայն այդ մարդուն բանտար- կում են և քննութիւնը այժմ շարունակում է: Այդ մարդը ցոյց է տուել, թէ ինքն ընկերներ ու- նի, որոնք իրան սովորեցրել են, որ զիշերը վեր- կենայ, հաւաքի խանութի փողերը և թանգազին իրեղէնները և կրկին մտնի իր տեղը, որ հետե- լեալ օրը դան և տանեն:

Նոյն տեղից մեզ գրում են հետեւեալը. «Այս- տեղի այն ընկերութիւնը, որը, ինչպէս գրած էի, ունէր մօտ 80.000 ռ. գրամապղում, քաղաքից և ամեն մի անգամ իր համար է աշխատում Այստեղի երկրաստորութիւնը մեծ պատրաստու- թիւններ է տեսնում Բաքիի 25 ամեայ յօբելա- նը տօնելու համար»:

ՄԵԾ-ՎԱՐԱՔԻԼԻՍԱՅԻՑ մեզ գրում են. «Ամսիս 4-ին, ձայների բազմութեամբ, դարձեալ ընտրվե- ցաւ մեր հին տանուտէր Խ. Ա., որի արժանաւո- րութիւնը գլխաւորապէս կայանում է նրանում, որ կաշտակեր չէ և չը գիտէ հասարակա- կան գումարների հետ խաղել խաղալ. այս բանի համար շնորհակալութեան արժանի է: Յա- ւում ենք միայն, որ համարաշխութեան և սիրոյ բացակայութիւն է նկատվում տանուտէրի և այն դասակարգի մէջ, որից գլխաւորապէս կախ- ված է մեր հասարակական գործերի յառաջադի- ւում: Արիւտակէս Սրբազանը մտադրել է ըն- տրել մի բարեկարգիչ և օգնական բարեկարգչի ու բոշակաւ ուսնիկներով: Սրբազանի այս զեղեցիկ մտադրութիւնը մենք ընդունում ենք ամենաօգտա- լէտ և ամենաանհրաժեշտ, որովհետեւ ամենայն աշխատանք պէտք է վարձատրվի սահմանած ու- ճիկով և ոչ թէ մի ուրիշ կերպով:

Մենք մեր յօդուածում ասել էինք, որ մեզ այժմ հարկաւոր են հասկացող և ուսում առած բարոյա- կան քահանաներ: Մեր այս ցանկութիւնը այժմ իրագործված կարող ենք համարել: Սրբազանը իր խոստման համեմատ միջոց է անարժաններին ձեռնադրելու և յօդուած արժանաւորներին ըն- դունելու քահանայական սուրբ պաշտօնը այնպի- սինելին, որոնք աւարտել են Ներ. դպրոցը կամ ուսում են առել բարձրագոյն դպրոցներում: Ինչպէս լսում ենք հաստատ աղբիւրներից, սրբա- զանը մօտիկ ժամանակներում կը ձեռնադրէ 4 հոգու, որոնք բացի Ներս. դպրոցը աւարտելուց ստացել են բարձրագոյն ուսում և յայտնի են ի- րանց գործունէութեամբ և բարոյականութեամբ: Եթէ երբ և իցէ ուսումնական երկտասարդները զանգառով են հօգեւոր իշխանութիւնից այն բա- նի մասին, որ նրանց համար քահանայական աւ- պարէզը փակված է եղել, այսօր նրանք կարող են միմիարվել, որ այդ ասպարէզը այժմ բաց է:

մութիւնը: Մի ձեռք, որչափ և զօրաւոր լինի, միայնակ ծափ չի տալ. լարված դրութիւնից և հակառակութիւնից ոչ մի բարիք չէ կարելի յու- սալ: Ով ցանկութիւն ունի հասարակաց շահերին ծառայելու, անպատճառ պէտք է հաշտութեան դրօշակի տակ մտնէ. հակառակ դէպքում, թող ոչ որ քաջութիւն չունենայ երեակայել, որ կա- րող է մի որ և է սուրբ գործ առաջ տանել. թող ամենքը լուրջ կերպով մտածեն այս անմիջիկա- րեակով վրա, որ ոչ զքի համար պատիւ չէ»:

Նոյն տեղից մեզ գրում են. «Լսում ենք, որ մեր անտառապետի 400 ռ. պահանջը հասարա- կութիւնից դատաստանական պաշտօնը բացասել է, վիճելի հողը արեւունական կալուածների թուով համարելով, որից իրաւունք չունէր և անտառա- պետը օգտվելու: Կարծում ենք, յարմար ժամա- նակ է սրա մասին խնդրել ներկայացնել պատշա- ճաւոր իշխանութեանը: Պէտք է նկատել, որ մե- լոնք հողային հարցում շատ թույլ և դանդաղ են շարժվում. մենք չունենք մի արիւտիւր մարդ, որ ջերմեւնութեամբ կպէր այդ հարցին և երի- րագործ դասի շահերը պաշտպանէր»:

Մեզ հաղորդում են ՄԵԾ-ՎԱՐԱՔԻԼԻՍԱՅԻՑ, որ մի կին այնտեղ մի երեխայ է ծնել, որը ձեռքերի և ոտների վրա չունի թաթիւ. մանուկը դեռ չա- րունակում է ապրել: Գժեպող ծնողները երկնա- յին պատուհան են համարում այդ երեխային ի- րանց համար, բայց դոնէ միմիարվեն նրանով, որ բնութիւնը շատ անգամ աւելի պայմանաւ բա- ներ է ստեղծում:

ՍՂՆԱՅԻՑ մեզ գրում են, որ թեմիս սրբազան առաջնորդի գրաւոր կարգադրութեան համեմատ, ամսիս 4-ին, կիրակի օրը, այնտեղի եկեղեցում, հանդիսաւոր սուրբ պատարագից յետոյ, կատար- վել է հանգուցեալ Գեորգ կաթողիկոսի տարեկից հոգեհանդիստը, ներկայութեամբ բոլոր քահանա- ների, որոնք թիւը ինն է այնտեղ: Ներկայ են եղել հայ երկսեռ ուսումնարանների սաները ի- րանց վարժապետներով, նոյնպէս և քաղաքային ուսումնարանի հայ աշակերտները: Հոգեհանգստի ժամանակ աշակերտներին բաժանեցին մոմ Բազմութիւնը մեծ էր:

Նոյն տեղից մեզ հաղորդում են. «Նոյնեմբը ամիսը այստեղ շատ զեղեցիկ անցաւ, կարծես կատարեալ դարուն լինէր, իսկ ղեկոսեմբը ամ- սին եղանակը խառնվեցաւ և թանձր մառախու- ղը պատեց Սղնայի և Ալազանի ձորը, այնպէս որ 10—15 քայլի վրա այլ ևս մարդ չէ երևում: Սա- ւոր բամբ է փչում և պատրաստվում է ձիւն զալ»:

Մեզ գրում են ՍՂՆԱՅԻՑ հետեւեալը. «Հաստատ աղբիւրներից լսում ենք, որ տեղիս հայ երկտա- սարդները, ի նկատի ունենալով մեր տաղանդա- ւոր հեղինակ Բաքիի 25 ամեայ գրական արդիւ- նաւոր գործունէութիւնը, մտադրել են գործի յօբե-

Ինչպէս շատերին յայտնի է նախկին թեմ. վե- րատեսուց պ. Գ. Բարեկարգիւնը փոխվեց և նրա պաշտօնը այժմ յանձնված է պ. Ղ. Ալա- յանցին: Մենք այստեղ միտք չունենալով մէկին պարտաւելու և միւսին զովաբանելու, այսքանը միայն կարող ենք ասել, որ սրբազանը իր ըն- տրութեան մէջ երբեք սխալված չէ: Սրբազանին իսկապէս հարկաւոր էր մի այնպիսի օգնական, որը իր մանկավարժական փորձառութեամբ (գործ- նական մանկավարժութեամբ) պարագմանց կեն- դանի օրինակ ցոյց տար մեր ծխական դպրոցնե- րում գործող երկտասարդ ուսուցիչներին: Այս նպատակին սրբազանը հասած է, որովհետեւ, ինչ- պէս լսում ենք զանազան զատուներից, պ. Ղ. Ալաչանցը ուր դրում է, որ ուսումնարանին այցելում է, ամեն տեղ կենդանի դասախօսու- թիւն է անում բոլոր ուսուցիչների ներկայու- թեամբ: Թէ որքան մեծ նշանակութիւն ունի դիւ- ղերում և զատուներում ապրող ուսուցչի համար օրինակելի դասախօսութիւնը, այդ ամեն մի ու- սուցիչ և ուսումնարանին մօտիկ ծանօթ մարդ կարող է եզրակացնել: Սրբազանը կարօտութիւն ու- նէր ունենալու մի այնպիսի թեմ. վերատեսուց, որը կարող լինէր անզգայը չըթողալ զատուներում և հեռաւոր գիւղերում, և եղած ուսումնարանները պահպանելու և նրանց կարիքն իմանալու, իսկ չեղած

տեղերը այդպիսիք բանալու: Եւ ճշմարիտ, պ. Ա- ղաչանցը, ընտրվելու օրից սկսած միշտ շրջում է և հարկաւոր անօրէնութիւն անում:

Ինչպէս թիֆլիսը, այնպէս էլ մի քանի զատու- ներ ունեն բարեկարգիչներ կամ գործակալներ: Այդ բարեկարգիչների պարտականութիւնը միա- րամասն չիլել աւելորդ համարելով, խօսենք գլխաւոր պարտականութիւնների մասին: Օրինակ, թիֆլիսի բարեկարգիչ պարտականութիւնն է շա- րաթը երեք օր, առաւօտեան ժամը 10-ից սկսած մինչև ժամը երկուսը ճաշից յետոյ, անշուշտ ներ- կայ լինել կօնսիտօրում հարկաւոր հրահանգներ ընդունելու և կատարելու: Բարեկարգիչ ձեռքին է եղել մինչև այսօր պատկազրամեն հաւաքելու և պատկի հրահանգները տալու պարտականութիւնը: Կայրեական և նշանաւոր տօն օրերին բարեկարգիչն է հսկում եկեղեցական արտաքին կարգ ու կանո- նի ճշդութեամբ կատարելու վրա: Բարեկար- գիչ պարտականութիւնն է շաբաթը զոնէ մի ան- զամ այցելել իւրաքանչիւր եկեղեցի հարկաւոր նկատողութիւններ և կարգադրութիւններ անելու և այլն և այլն: Այս բոլորի և սրանց նման բիւրաւոր ծառայութիւնների համար բարեկարգի- չը ոչինչ ուսնիկ, ոչ մի վարձատրութիւն չէ ստա- նում: Նրա վարձատրութիւնը, եթէ լինում էր, այն և անուղղակի, կողմնակի աղբիւրներից էր լի-

նում: Արիւտակէս Սրբազանը մտադրել է ըն- տրել մի բարեկարգիչ և օգնական բարեկարգչի ու բոշակաւ ուսնիկներով: Սրբազանի այս զեղեցիկ մտադրութիւնը մենք ընդունում ենք ամենաօգտա- լէտ և ամենաանհրաժեշտ, որովհետեւ ամենայն աշխատանք պէտք է վարձատրվի սահմանած ու- ճիկով և ոչ թէ մի ուրիշ կերպով:

Մենք մեր յօդուածում ասել էինք, որ մեզ այժմ հարկաւոր են հասկացող և ուսում առած բարոյա- կան քահանաներ: Մեր այս ցանկութիւնը այժմ իրագործված կարող ենք համարել: Սրբազանը իր խոստման համեմատ միջոց է անարժաններին ձեռնադրելու և յօդուած արժանաւորներին ըն- դունելու քահանայական սուրբ պաշտօնը այնպի- սինելին, որոնք աւարտել են Ներ. դպրոցը կամ ուսում են առել բարձրագոյն դպրոցներում: Ինչպէս լսում ենք հաստատ աղբիւրներից, սրբա- զանը մօտիկ ժամանակներում կը ձեռնադրէ 4 հոգու, որոնք բացի Ներս. դպրոցը աւարտելուց ստացել են բարձրագոյն ուսում և յայտնի են ի- րանց գործունէութեամբ և բարոյականութեամբ: Եթէ երբ և իցէ ուսումնական երկտասարդները զանգառով են հօգեւոր իշխանութիւնից այն բա- նի մասին, որ նրանց համար քահանայական աւ- պարէզը փակված է եղել, այսօր նրանք կարող են միմիարվել, որ այդ ասպարէզը այժմ բաց է:

Արիւտակէս Սրբազանի վերոյիշեալ գործունէու- թիւնների և զեղեցիկ յատկութիւնների հետ պէտք է աւելացնեմ և մի գովելի յատկութիւն. այդ նրա վերին աստիճանի անշահասիրութիւնն է: Սրբա- զանը գնալով Սղնայի իր հօտին այցելութիւն տնելու, այնտեղ պատարագ մատոյց: Ժողովուրդը ըստ սովորութեան առաջարկեց սրբազանին 200 ռ. որպէս ժամոց: Այդ ժամոցը նա սկսեց չը կամեցաւ ընդունել, շատ թախանձանքից ստիպ- ված ընդունեց, բայց յետոյ նոյն փողը ընծայեց Սղնայի ծխական դպրոցին:

Մօտ օրերի թիֆլիսի կուսանաջ վանքի մի բա- նի կոյսերին սրբազանը սարկաւարդութեան աստի- ճան տուեց: Կոյսերը հարուստ ընտանիքի զատկ- ներ լինելով, կամեցան սրբազանի աշխատանքի վարձը հատուցանել և այդ նպատակով հաւաքե- լով մի գումար առաջարկեցին սրբազանին, բայց սրբազանը բաց է ի բաց մերժեց և նոյնութեամբ յետ դարձրեց:

Արիւտակէս սրբազանի գործունէութեան մասին առ այժմ մեր ասելքը վերջացնելով, մեզ մնում է ցանկալ, որ սուրբ Սիւնդը և այժմեան տեղակալ երբեմն թիֆլիսի առաջնորդ Մակար արքեպիս- կոպոսը ի նկատի ունենալով Արիւտակէս Սրբա- զանի և սրա նման եռանդոտ առաջնորդների բարի ձգտումները, աշխատէ որքան կարելի է աւելի ոյժ

Այսպես ուրիմն, Արիստակէս սրբազանը ի նկատի
ռենկալով վերադիշեալ ձևով կազմած արձանադրու-
թիւնները, կը կազմէ մի ընդարձակ ծրագիր
ջուկ ջուկ պայմաններով, այդ ծրագիրը մի
անդրադարձ հետ միասին առաջնորդի, կօնխմատօրի
անդամներէ և բոլոր պատգամաւորներէ ստորա-
դրուածքամբ կը ներկայացվի նորոշտօրի վեհափա-
ռին: Նորին վեհափառութիւնը կարծած չի զա-
նայ անտարբեւտ առաջնորդի այն մասըրութիւնը,
որը արդէն սիրով ընդունած է համայն ժողո-
ղրդից:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ
ԲԱՅՏԻՒ **„ՋԱԼԱԼԵԴԻՒՆ“** ԿԷՊԸ:
2—7

Մամուլի տակից լոյս տեսաւ

„ԱՐԱՐԱՏԻ ԳԼՈՒԽԸ“

ձանապարհորդական տպաւորութիւններ
նկարագիր Գ. Լ. Մօրզովցեկի: (Թիֆլիսից
սկսած մինչև ԱՐԱՐԱՏԻ ԳԼՈՒԽԸ)

Մաքուր տպագրութիւն, անկէս թղթի
փրա: Գինն է 1 ռուբլ չանդերձ ձանապարհ-
հաճախով:

Ծանօթ: Եւրոպայի փոխադրողի մօտ,
որին կարելի է դառնալ այս հասցեով.
„Пусть, Аракету Бабаханияну“.

Ծանօթ. Գրքին յարգելի բաժանորդնե-
րին յայտնում եմ ի գիտութիւն, որ ամեն-
քէն էլ շուտով կը ստանան իրանց գրքերը:
Ա. Բարախանեանց:

2—10

ԿԱՆԱՆՑ ԴԵՐՁԱԿ Գ. ԱՆԻՆԱՆ և ԸՆԿ.
Մինչև մարտի 1-ը մի ամսոյ ըն-
թացքում կատարելի պատէքները ըն-
դունում եմ 20% զիջումով: Գանձու-
կայա փողոցում:

2—3



45—50

Յայտնի և տաղանդաւոր բանաստեղծ
ՍԷՅԱՏԻ (Կապիտան Պետրոս-Բէդ Մատա-
թեանց) ընտիր բայց անտիպ մնացած բա-
նաստեղծութիւնները փոշու տակից և կո-
րսեան ձանապարհից ազատելու հա-
մար հատորներով հետգհետ լոյս աշխարհ
պիտի հանեն: Ամենայն ինչ պատրաստ շու-
տով մամուլի տակ կը մնան իմ սեպհական
տպարանում արագատիպ մեքենայով: Առ-
այժմ կը տպվի երեք հատորիկը միասին,
կանխիկ բաժանորդագրողներին համար մի
ռուբլի: Եւրոպայից յետոյ գինը կը բար-
ձրանայ:

Ցանկացողները թող շուտով մեզ հասցեն
իրանց բաժանորդագիրը հետևեալ հաս-
ցեով.

Въ Баку. Въ типографію Алек-
сандра К. Касабова.

Ա. Ղասապեանց:

4—20

Հայոց Կովկասի Բարեգործական Ընկերու-
թեան ընդհանուր ժողովը, ընկերութեան
Խորհրդի անդամներ և փոխանդամներ ընտ-
րելու համար, լինելու է կիրակի, ամսին
18-ին, առաւօտեան 11 ժամին, Արծրունու
թատրոնում:

ՖԲԱՆՍԻԱԿԱՆ ՇՈՒՏՆԱԽԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԸՆ. ՊԱԿԷ և ԸՆԿ.

Հինգշաբթի, 8 զեկտեմբերի հասաւ ՓՕԹԻ
չափնաւոր, որի նաւապետն է ՆԷԼ (NEL)

Տեղեկութիւններին համար գիմը ընկերութեան արջնաներին. ֆոթիում պ. ԳԱՐԱՆԻՈՒՆԻ
ԹԻՖԼԻՍԻՄ պ. ԲԸՆՈՒՆ, Արծրունու զաւլերէս, № 194.

MINGRELIE (ՄԻՆԳՐԵԼԻԱ)

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

Այն պարոններին և զբաղմունքա-
նոցներին, որոնց կամ ուր ուղարկված
են վաճառելու „ԵՍ ԷԼ ԻՄ ՍԱՅԻ“ օ-
րինակները, շտապեն վաճառուածներին
փողերը և, եթէ չեն ցանկանում շա-
րունակել վաճառում, մնացած օրի-
նակները ինձ հասցնել այս հասցեով.
Чрезъ Просковеевъ въ гор. Св.
Креста. Учителю Сафаріанцъ.

3—3

Մեր „Բնախօսութիւն“ գիրքը, որ մինչև
այժմ մի օրինակը վաճառվում էր նշանա-
կած գնով—80 կոպէկով, այսուհետև կը վա-
ճառվի 50 կոպէկով: Գիրքը պէտքական է
թէ ուսումնարաններին, թէ ուսուցիչներին,
և ընթերցող դասի համար: Ցանկացողները
կարող են ձեռք բերել Թիֆլիսի գրավաճա-
ռանոցներից և երևանում „Մանկանց բարե-
կամ“ գրատնից, իսկ կիւրակէ օրերը եւր-
մուկայում, Աղէքսանդրեան այգու գիմաց:

Հրատարակիչ Մ. Բաղինեանց.

„ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԹԵՐԹԻ“

Խմբագրութիւնը ընդունում է բաժանոր-
դագրութիւն 1884 թ. (որ է 3 տարե-
շրջան):

„ԹԵՐԹԻ“ կը հրատարակվի ԵՐԵՎԱՆԻՄ,
նախընթաց տարիներին ծրագրով, կը տպա-
գրվի պ. Էմին Տէր-Գրիգորեանցի տպարա-
նում:

Տարեկան գինն է՝ 3 ռուբլ կանխիկ վճա-
րելի:

Ստորագրվել կարելի է խմբագրատնի-
քում քաղաքացիք գիմում են հետևեալ
հասցեով. Въ г. Эривань. Въ редакцію
журнала „Гигиенический Листокъ“.

Խմբագիր-հրատարակիչ ԲԺ. ԼԵՆԻՆ ՏԻԳ-
ԲԱՆԵԱՆՑ.

ՀԱՅՈՑ ԿՈՎԿԱՍԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵ-
ՐՈՒԹԻՒՆ

Հայոց Կովկասի Բարեգործական Ընկերու-
թեան անդամակցութեան տոմսերը՝ ներկայ եր-
րորդ տարեշրջանի համար՝ ծախվում են ԾՈՎԻՍ-
ՆԵԱՆ եղբայրացականութեամբ, պ. Ե. Բ. ՄԱՍՆԻՐԵԱՆ-
ՑԻ լամպայի մագաղանում և ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ու
ԿՈՎԿԱՍԱՆ գրավաճառանոցներում:

ԲԱՅՈՒՄԸ Է ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵՇՐՁԱՆԻ 1884 թ. ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ:

„Ա Ղ Բ Ի Ի Ր“

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Դ

ՄԻԱՄՍԵԱՅ ՀԻՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐԵՎԱՆԵՐԻ ԵՒ ԴԱՏԱԻԱԿԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

(ՏԱՐԵՆԸ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ 12 ՀԱՄԱՐ 2—3 ՏՊԱԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ)

Կը հրատարակվի մի և նոյն գիրքով, մի և նոյն ուղղութեամբ և նոյն աշխատողիցների մաս-
նակցութեամբ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

- I. Վէպեր, մանրամասն, զրոյցներ, առակներ, հեքիաթներ, ձանապարհորդութիւններ, կենսագրութիւններ:
- II. Բանաստեղծութիւններ:
- III. Գիտութիւն և արուեստ:
- IV. Հետաքրքիր տեղեկութիւններ:
- V. Այլ և այլք:

Զ Ո Ւ Ա Ր Հ Ա Լ Ի Ք

- VI. Մանկական, ֆրեզկան, չափամասի և այլ խաղեր, ընթերցան, թարգմանական խնդր-
ներ, Անեկդոտներ, հանելուկներ, չուտասելուկներ:
- VII. Երգեր նոտաներով:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

- VIII. Կրթութեան և դատարարական վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ:
- IX. Առաջարկութիւններ, խորհուրդներ:
- X. Մատենախօսութիւն և նոր գրքեր:
- XI. Խառն լուրեր:

Պատասխաններ: Յայտարարութիւններ:

Երկրորդ բաժինը կը հրատարակվի առանձին թերթերով տարեկան չորս ան-
գամ:

Տարեկան բաժանորդները կը ստանան երկու պէթիս, յուրիս և զեկտեմբերին:

„ԱՂԲԻՐԻ“ տարեկան բաժանորդագիրը 3 ռուբլ է, կէս տարվան՝ 2 ռուբլ:
Հասցէն՝ Тифлисъ, редакция „АГНУРЪ“, իսկ արտասահմանից՝ Tiflis
(Caucase) Rédaction du journal „AGBUR“.

„ԱՂԲԻՐԻ“ Թիֆլիսում կարելի է ստորագրուել և հայ գրավաճառանոցնե-
րում, պ. Շահգիրեանի պալիթիումում ու Մանկական գրադարանում: Իսկ Պոլսում
„Բուրաստան Մանկանց“ հանդիսի խմբագրատնից:

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ԵԱՋԱՐԵԱՆՑ:

1—3

Մ. Ն. ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՊԱՇԵՍ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԽՍ

ԱՐՄԵՆԱՍԿԻ ԲԱՋԱՐ, ԿԱՏՈԼԻԶԵՍԿԱՅՍ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՆ, ՏՈՒՆ № 13

ՎԻՆԵՆԱՅԻ ԿԱՐԱՍԻՔ, զանազան աթոռներ 35 ռուբլուց գիւժինը, բազկա-
թոռներ 6 ռ., զիւլմաներ 12—25 ռ., կաշեի, մանկական աթոռներ և այլն:
ԱՆԳԼԻԱՆԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱՆԱՆ ՄԱՀԱԿԱՆՆԵՐ, ձանապարհի մահապաղներ, պա-
հարաններ, ծաղիկ սամովաներ: Չեմոդաններ 2 ռ. 75 կ.—26 ռ., սակօ-
յաժ ձեռքի և ուսից կանխու, ձանապարհի սուսկաներ, ձԱՆԱՊԱՀԻ ԱՐԿՂԵՐ 5
ռ. 50 կ.—30 ռ.:

Սամովաներ, խոհանոցի պղնձե ամաններ, կոֆէյնիկ, թէյամաններ, ութո-
ներ և աղալու գործիք, գերմանական էմալով ամաններ, ԵՐԵՎ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՄԱՐ-
ՄԱՐԻՈՆԻ ամաններ 40 ռ., երես լուսնայու պղնձե և ժեստի ամաններ:

ՊԱՏԻ ՀԱՅԵԼԻՆԵՐ 9 ռ., տուրկաթի հայելներ 2 ռ. 40 կ.—13 ռ., զանազան
մետաղների մոմակներ 1 ռ.—15 ռ., սեղանի գզալներ 4 ռ. 50 կ. և թանգ,
թէյի գզալներ Ֆրանսիայի, մեքսիկայի, լեհական և բրիտանական արծաթից աւելի
էփան, քան թէ ուրիշ տեղ, զանակներ, պատառաքաղեր 2 ռ.—26 ռ.:

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿՕՇԻԿՆԵՐ կանանց և մարդկանց, հովանոցներ կանանց և
մարդկանց, ուսանական և անդլիական պողպատէ և երկաթէ զանակներ, յայտ-
նի գործարաններից, 10,000 հատ անգլիական և գերմանական կողպէքներ
10 կ. և աւելի:

ԲԷՎՈԼՎԵՐՆԵՐ զանազան տեսակի 3 ռ. 50 կ.—35 ռ., պատրոններ ընկալիչ-
ների համար, հրացան 6 ռ. և աւելի, զանազան վեշալկաներ, կշիռքներ: Անգ-
լիական և ամերիկական կլէտիկա 50 կ.—2 ռ. արշինը:

Մշտապէս ունեւմ 10,000 ֆ. ԹԷՑ Պօլսի եղբայրների, կաֆէ ՄԻՆԵԼՍՈՆԻ,
թէյի համար խմորեղէն Էյնեմի, ԲԷՑԻԱՐԻԻ սիգարներ, հոտաւետ ջուր (Օղը-
կոյոն) ծխող փողիք, պուդրա, գլիցերինի սապոն և այլն, աւելի էփան քան թէ
ուրիշ տեղ:

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ զաւանտէրէյի զանազան ԱՊԱՆԳՆԵՐ, ծխախոտի արկղ,
դրամարդ, քսակներ, սանդուղ, շապիկներ, լայկի ձեռնոցներ կանանց, պինու-
րական գամշի ձեռնոցներ, գարուս, թելեր, բրօզի և մարմարիօնի թանաքամա-
ներ, մոկրամաններ, գրիչներ, մոտիաներ, գրչակոթներ, սուրճուչ, փօստի թուղթ,
ծրարներ և այլն:

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ խմաներ (պրօբկա) հանքային ջրերի, գարեջրի, գի-
նու և զեղաւան ապրանքների համար, նոյնպէս և ուրիշ առարկաներ:
Վերև յիշված բոլոր առարկաները ունեւմ մեծ քանակութեամբ և ստանում եւ
ԱՐՄԱՍԱՀՄԱՆԻ և ՌՈՒՍԱՍԱՆԻ գործարաններից անմիջապէս:

Առեւտրականներին զիջում և առանձին պայմաններ:

Օտարաքաղաքացիք կարող են գիմել. Тифлисъ. М. Н. ТЕРЬ-НИКОГОВОУ.

88—100